«Պետական սեփականություն հանդիսացող հատուկ մշակված համակարգում (բջջային հավելված) գրանցված նույն անձի կողմից նույն տրանսպորտային միջոցի վերաբերյալ էլեկտրոնային հաղորդում ուղարկելու ամսական և տարեկան առավելագույն քանակը, ինչպես նաև բջջային հավելվածի միջոցով արձանագրվող իրավախախտման տեսակները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N _______-Ն

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՏՈՒԿ ՄՇԱԿՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (ԲՋՋԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ) ԳՐԱՆՑՎԱԾ ՆՈՒՅՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՆՈՒՅՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԱՄՍԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲՋՋԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՐՁԱՆԱԳՐՎՈՂ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի 7.3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել, որ՝

1) պետական սեփականություն հանդիսացող հատուկ մշակված

համակարգում (այսուհետ՝ բջջային հավելված) գրանցված նույն անձի կողմից նույն տրանսպորտային միջոցի վերաբերյալ ամսական կարող է ներկայացվել առավելագույնը 3, իսկ տարեկան առավելագույնը 30 էլեկտրոնային հաղորդում,

2) բջջային հավելվածի միջոցով կարող են արձանագրվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 43.1-ին հոդվածի 7-րդ մասով, 123.3 հոդվածով, 124-րդ հոդվածի 2-րդ, 9-րդ, 11-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ, 18-րդ, 21-րդ, 26-րդ, 27-րդ մասերով, 124.3-րդ հոդվածով և 135.2-րդ հոդվածներով սահմանված տեսակների իրավախախտումները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բջջային հավելվածը շահագործման հանձնելու օրվանից, բայց ոչ ուշ քան 2021 թվականի հունվարի 1-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ
Ն.ՓԱՇԻՆՅԱՆ

«____»___________ 2020թ.

Երևան